

Մախիջկանս այնտեղի նորակառոյց եկեղեցին օծելու համար:

Տփլիսի ս. Սարգիս վանքի վանահայր Թադէոս վրդ. յետ կոչուելով, նրա տեղ վանահայր և Կոնստանտնուպոլսի առաջ անդամ կարգուեցաւ Արժ. Մխիթար վրդ. Տ. Մկրտչեան, որ զէպի իւր պաշտօնատեղին մեկնեց հոկտ. 30-ին:

Արժ. Գրիգորիս վրդ.՝ Նուխոյ փոխանորդը, Մայր Աթոռս ժամանեց հոկտ. 26-ին Սրբալոյս Միւռոն տանելու նպատակով:

Արժ. Նղիշէ վրդ. Մուրադեան՝ Կարսի փոխանորդը, որ սեպտ. 23-ին Մայր Աթոռս էր եկել վիճակային ինչ ինչ գործերի մասին զեկուցումն ներկայացնելու, զէպի իւր պաշտօնատեղին մեկնեց հոկտ. 28-ին:

Արժ. Կիւրեղ վրդ. նշանակուելով Ախալցխայի փոխանորդ՝ նոյեմբ. 1-ին ուղևորուեց զէպի իւր պաշտօնատեղին: Մախիջկան փոխանորդ Տ. Պետրոս վրդ. յետ է կանչուած:

Խոր վիրացի վանքին ժամանակաւորապէս վանահայր կարգուած Տ. Թադէոս արեղայ կոչուելով Մայր Աթոռ, նրա տեղ վանահայր նշանակուեցաւ Գանձատարայ վանքի վանահայր Արժ. Անտոն վրդ. որ նոյեմ. 8-ին մեկնեց իւր պաշտօնատեղին:

Մայր Աթոռի միտան Արժ. Արսէն վրդ. Ղլաճեան՝ որ կոկորդի հիւանդութիւնը դարմանելու համար զնացել էր Թիֆլիս, ս. Էջմիածին վերադարձաւ:

Վեհ. Հայրապետի բարեհաճ հրամանի համաձայն Նորին Սրբութեան զիւանապետ Բարձր. Տ. Կորիւն վրդ. հոկտ. 28-ին ուղևորուելով Գառնոյ զաւտաս, հոկտ. 31-ին և նոյեմբ. 1-ին օծեց երկու նորակառոյց եկեղեցիներ՝ մին Դուին զիւղում ս. Մեսրոպ Թարգմանչի անունով և միւսը Դարդալու զիւղում ս. Սահակ Պարթևի անունով: Հայր

սուրբը նոյեմբ. 2 ին վերադարձաւ ս. Էջմիածին:

Շուշուոյ Կոնստանտնուպոլսի նախանգամ Արժ. Մատթէոս վրդ. Նորին Վեհափառութեան հրամանաւ կանչուեցաւ ս. Էջմիածին:

Նորին Ս. Օծութեան բարեհաճ կարգադրութեամբ Արժ. Թովմա վրդ. նշանակուեց Մարցայ կալուածների կառավարիչ:

Իրենց առողջութիւնը դարմանելու համար Մայր Աթոռից ժամանակաւորապէս բացակայելուց յետոյ վերադարձան Գեր. Անանիա եպս. սեպտ. 18-ին, Սիւնոզի անդամ Գեր. Ստայի արքեպս. հոկտ. 5-ին, Շնորհ. Դպիր Գալուստ Տ. Մկրտչեան սեպտ. 23-ին:

† Վերջի պահուն Պոլսոյ Ամեն. Ս. Պատրիարքի առ Ն. Ս. Օծութիւն ուղղած մի հեռագրից իմացանք, որ Պոլսոյ նախորդ Պատրիարք Տ. Խորէն արքեպիսկոպոս Աչքեան հոկտ. 26-ին վախճանուել է և մեծ հանդիսով թաղուել է 27-ին:



**Տ. ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՏԷՐ ԳԼՍՊԱՐԵԱՆ**

Սիւնոզի նախանգամ Գեր. Սարգիս արքեպիսկոպոս Տէր Գասպարեան, որ վեց ամսից ի վեր տառապում էր ծանր հիւանդութեամբ, սեպտ. 3-ին հանգեաւ ի Տէր իւր հայրենի Ղարաբուլաղ զիւղում (Արարան), ուր առանձնացած էր վերջերս:

Սրբազանի մահուան գոյժն երբ հասաւ ս. Էջմիածին, Նորին Վեհափառութեան յատուկ կարգադրութեամբ Արարան զնացին Սիւնոզի առաջ անդամ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան, Լուսարարապետ Գեր. Մակար եպս., Բարձր. Ղևոնդ և Գարեգին վար-

դասկանները որոնք սեպտ. 4-ին հասնելով յաջորդ օրը կատարեցին թաղման կարգը:

Հանգուցեալը ծնուած էր 1834 թուին Արարանի Ղարաբուլազ գիւղում. իւր ուսումն ստացել է ս. Էջմիածնի Ժառանգաւորաց վարժարանում որը աւարտելուց յետոյ՝ 1851 թ. սեպտ. 14-ին ձեռնադրուել է աւագ սարկաւազ և հինգ տարի յետոյ 1856 թ. մարտի 26՝ վարգապետ Առաջարկութեամբ Ներսէս Ե. կաթողիկոսի հաստատուել է անդամ Սինօզի՝ 1857 թ. յունուարի 12-ին որից արձակուել է 1864 թ. մայիսի 15-ին: Նոյն տարուայ օգոստոսի 15 ին Երեւանի թեմի փոխանորդ է նշանակուել. յաջորդ տարուայ յունուարի 9-ին Մաթթեոս կաթողիկոսի հրամանաւ կարգուել է վանահայր Տաթևու: 1866 թ. սեպտ. 15-ին պատուիրակ է եղել Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի ընտրութեան ժամանակ. 1868 թ. մայիս 13-ին նշանակուել է կառավարիչ Բեսարաբիոյ թեմին, նոյն տարուայ օգոստ. 14-ին Նորմի Ս. Նաչի վանքի վերահսկող, 1869 թ. մարտի 9-ին նախանդամ Բեսարաբիոյ հայոց Կոնսիստորիալի 1872 թ. յունուարի 15-ին կրկին կառավարիչ Բեսարաբիոյ թեմին, որից արձակուելով 1877 թ. սեպտ. 1-ին նշանակուել է փոխանորդ Սուխուայ՝ նոյն տարուայ սեպտ. 29-ին և այս պաշտօնը վարել է մինչև 1883 թ. յունուարի 7: Այս թուականին կոչուելով ս. Էջմիածին՝ ընտրուել է անդամ Վանական Կառավարութեան և այդ պաշտօնը վարել է մինչև 1888 թ.: 1886 թ.-ի յունուարի 8-ին եպիսկոպոս է ձեռնադրուել Տ. Տ. Մահար Ս. կաթողիկոսից. նոյն տարուայ նոյեմբերի 13-ին հաստատուել է անդամ Սինօզի. 1890 օգոստոս 20-ին կարգուել է տեսուչ Գեորգեան հոգևոր ժեմարանի. 1893 թ. յուլիս 21-ին իրրե պատուիրակ Ս. Ս. Օծութեան Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Հայրապետի՝ ուղևորուել է ս. Երուսաղէմ. նոյն տարուայ սեպտ. 21-ին վերադառնալ տեսուչ է եղել Գէորգեան ժեմարանի. իսկ 1897 թ. դեկտ. 22-ին Վեհ. Հայրապետից ստացել է արքեպիսկոպոսութեան պատիւ:

Իւր այս բազմաթիւ ծառայութեանց մէջ ցոյց տուած արիւթեան համար հան-

դուցեալը արժանացել է ծաղկեայ փիրոնի և լանջախաչի պարգևատրութեան 1859-ին. Բեսարաբիոյ թեմի բարեօք կառավարութեան համար ստացել է 1873 թ.-ին շնորհակալութեան կնիգակ, 1887 թ.-ին պնակէ Վեհ. Մահար Կաթողիկոսից. իսկ Ազգիս արդի Վեհ. Հայրապետի իրրե պատուիրակ գնալու ժամանակ՝ Պօլսում Տաճկաց Սուլթանից ստացել է Մէջլիսի երկրորդ կարգի պատուանշան:

Հանգուցեալի թողածն յաջորդ կիւրակէին Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ և նախագահութեամբ հոգեհանգիստ կատարուեցաւ Մայր Տաճարում՝ ինչպէս Սարգիս Սրբազանի այնպէս և Պօլսում վախճանուած Տ. Դրիգորիս եպիսկոպոսի համար, որի միջոցին Դեր. Սուքիաս Սրբ. մի սրտառուց զամբանական խօսելով՝ զրուտեց երկու սրբազանների զործունէութիւնը և մաղթեց, որ Տէր Աստուած անպակաս անէ մեր ազգի միջոց արժանաւոր հոգևորականներին: \*

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ  
ԻԵ. ՏԱՐԵԿԱՐԱԸ

Ժեմարանի բացման 25-րդ տարեդարձը աօնու եցաւ պատշաճ հանդիսաւորութեամբ սեպտ. 25—26-ին:

Այդ օրը ուրիշ տարիների նման ուխտաւորների մեծ բազմութիւն էր ժողովուել Վաղարշապատում՝ զանազան կողմերից՝ Ալեքսանդրապոլի Երեւանի Սուրմալուի դաւառներից և շրջակայ գիւղերից. կային այցելուներ նաև հեռու տեղերից՝ Թիֆլիսից, Ծուշուց, Ն. Նախիջևանից ելն Գիւղըր Վանքի հիւրատան հին և նոր շինութիւնները ու ամբողջ բակը լցուած էր նոցա բազմութեամբ:

\* Մի քիւրթեացուքուց Սարգիս սրբազանի մահացուցիլ և հոգեհանգիստի մասին տեղեկութիւնք յիս են մնացել Արարտի նախորդ նամարից: